



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2017 թվականի N 95-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝


ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին» N 241-Ա որոշման հավելված 8-ում «Կարապետյան Արմինե» բառերը փոխարինել «Արզումանյան Մերի» բառերով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կից՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի N 10 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 20-ի գրությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

 Վ. ՀԱԿՈՔՅԱՆ



2017 թ. հոկտեմբերի 2
ք. Կապան



ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
<<ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 10 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

Սյունիքի մարզ, Գապան, Շինարարների 19, հեռ. 2-55-92

20.09 2017թ.

ՀՀ ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 10 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՒԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ՝ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ Սյունիքի մարզպետ
Վ. Հակոբյանին

Մեծարգո պարոն Հակոբյան


Ի կատարումն ՀՀ ԿԳ նախարարի 2010թ. մարտի 18-ի Հայաստանի Հանրապետության <<Պետական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի կնիքի վառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի՝ անհրաժեշտություն է առաջացել <<Գապանի թիվ 10 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի անվանական կազմում փոփոխություն կատարելու:

Խնդրում եմ Ձեզ կատարել համապատասխան փոփոխությունը:

Կից ներկայացնում եմ կառավարման խորհրդի թիվ 2 նիստի որոշման և ծնողական խորհրդի թիվ 2 նիստի որոշման քաղվածքները:

Գապանի թիվ 10 միջն. դպրոցի
կառավարման խորհրդի նախագահ՝

Մ. Հակոբյան Ս. Հակոբյան



ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ Սյունիքի մարզի <<Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի 2017թ. սեպտեմբերի 15 -ին կայացած նիստի արձանագրությունից

Լսեցին՝

<<Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամ /ծնողական խորհրդի ներկայացուցիչ/ Արմինե Կարապետյանի լիազորությունների դադարեցման հարցը՝ համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 2010թ. մարտի 18-ի ՀՀ <<Պետական ուսումնական հաստատության>> ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի ձևավորման կարգի:

Որոշեցին՝

1. Դադարեցնել կառավարման խորհրդի անդամ / ծնողական խորհրդի կողմից ներկայացված/ Արմինե Կարապետյանի լիազորությունները՝ նրա դուստր Մարիանա Հարությունյանի՝ Կապանի պետական բժշկական քոլեջ տեղափոխվելու պատճառով:
2. Գրավոր տեղեկացնել ծնողական խորհրդին՝ նոր անդամ առաջադրելու համար:

Խորհրդի նախագահ՝

/#huc/ Ս. Հակոբյան

ՔԱՂՎԱԾՔ

Կապանի թիվ 10 միջն. դպրոցի ԾԽ 2017 թ. սեպտեմբերի 19-ի թիվ 2 նիստից:
Նիստին մասնակցել են ԾԽ 12 անդամներից 12-ը:

Օրակարգում

1. Դպրոցի խորհրդի անդամի ընտրություն:

Լսեցին --- 1. Դպրոցի ԾԽ նախագահ Ա. Պապեյանը նշեց, որ ի կատարումն ՀՀ ԿԳ նախարարի 2010 թ. մարտի 18-ին ՀՀ «Պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի՝ հիմք ընդունելով ԴԽ-ի գրությունը՝ Ա. Կարապետյանի լիազորությունների դադարեցման մասին/դուստր Մարիաննա Հարությունյանի 9-րդ դասարանն ավարտելու և Կապանի պետական բժշկական քոլեջ ընդունվելու պատճառով/ անհրաժեշտ է ԾԽ կազմից առաջադրել նոր թեկնածուի՝ դպրոցի խորհրդում ընդգրկվելու համար:

Առաջարկեցին --- 3-րդ դասարանի ծնողկոմիտեի նախագահ Մ. Արզումանյանի, 10-րդ դասարանի ծնողկոմիտեի նախագահ Ա. Հախումյանի թեկնածությունը:

Փակ գաղտնի քվեարկությամբ ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

1. Մերի Արզումանյան - 8 ձայն

2. Արուս Հախումյան - 4 ձայն

Որոշեցին

Առավելագույն ձայներ ստացած Մերի Արզումանյանին առաջադրել դպրոցի խորհրդի կազմում:

ԾԽ նախագահ՝  Ա. Պապեյան